ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական նախագիծ՝ «Գողացված ապագա, աշակերտուհու պայքարը հանուն կրթության»
Ղեկավար՝ Զոյա Գևորգյան
Դասարան՝ **8**-րդ Ա
Առարկա՝ Անգլերեն
Կիսամյակ՝ Երկրորդ
Տևողություն՝ **6** շաբաթ **(6** ժամ**)**

2024–2025 ուստարվա երկրորդ կիսամյակում 8-րդ Ա դասարանում իրականացվել է «Գողացված ապագա, աշակերտուհու պայքարը հանուն կրթության» անվանումով նախագիծը, որը կազմակերպվել է անգլերեն առարկայի շրջանակում իմ ղեկավարությամբ: Նախագծի նպատակն էր աշակերտներին ծանոթացնել մարդու իրավունքների հիմնական սկզբունքներին՝ կիրառելով ստեղծագործական և համագործակցային ուսուցման մեթոդներ: Նախագծի ընթացքում մեծ ուշադրություն է դարձվել քննադատական մտածողությանը, թիմային աշխատանքին, փաստարկված և հստակ խոսքին, ինչպես նաև դերախաղերի միջոցով իրավական գործընթացների ընկալման հմտությունների զարգացմանը:

Նախագծին մասնակցել են դասարանի հետևյալ աշակերտները՝ Անգելինա Մկրտչյան, Ռազմիկ Մխիթարյան, Գոռ Հովհաննիսյան, Գեղամ Հովհաննիսյան, Ներսես Հակոբյան, Ավետ Ավանեսյան, Տաթևիկ Գևորգյան, Անի Բաբայան, Դավիթ Բաղալյան, Ալեն Վարդանյան, Նարեկ Անտոնյան և Էլենա Պողոսյան: Նրանք ակտիվ մասնակցություն են ցուցաբերել բոլոր փուլերում՝ սկսած տեսական նյութերի ուսումնասիրությունից մինչև վերջնարդյունքի պատրաստումը:

Աշակերտները բաժանվել են երեք խմբի՝ սցենարի մշակման, իրավաբանական և տեխնիկական: Խմբային աշխատանքի ընթացքում նրանք հորինել են մի դեպք, որտեղ խախտվել է մարդու իրավունքը, մշակել են դատավարության սցենար, գրել են յուրաքանչյուր կերպարի խոսքը, փաստարկներն և հակափաստարկներ: Իրավաբանական խումբը հանդես է եկել որպես «դատավորներ», «փաստաբաններ», «վկաներ» և մանրամասն ուսումնասիրել է մարդու իրավունքները: Տեխնիկական խումբը պատասխանատու է եղել դատավարության նկարահանումների, տեսագրության մոնտաժի և վերջնական ներկայացման համար:

Նախագիծը տևեց 6 շաբաթ: Այդ ընթացքում աշակերտները մասնակցել են տեսական և գործնական դասերին, անցկացրել են փորձեր, մասնակցել են բանավեճերի, կատարել են դատական նիստի բեմադրությունը և վերջում ներկայացրել են դատական գործընթացի տեսահոլովակը՝ որպես ուսումնական նախագծի վերջնարդյունք:

Նախագծի շնորհիվ աշակերտները ոչ միայն խորացրել են իրենց իրավական գիտելիքները, այլև սովորել են ճանաչել և գնահատել մարդու իրավունքների կարևորությունը թե՛ դպրոցում, թե՛ հասարակության մեջ: Նրանք կարողացել են տարբերել իրավունքների խախտումները, հարգալից ձևով արտահայտել իրենց կարծիքը, համագործակցել թիմում, կազմել փաստարկված եզրայթներ և վստահությամբ հանդես գալ հանրային խոսքում:

Նրանց մոտ հարստացել է դատական գործին առնչվող անգլերեն բառապաշարը : Աշակերտների մասնակցությունը, գիտելիքներն ու ներկայացման հմտությունները գնահատվել են ըստ սահմանված չափանիշների՝ առավելագույնը 10 միավորով:

Այս նախագիծը ոչ միայն ամրապնդեց աշակերտների տեսական և կիրառական գիտելիքները մարդու իրավունքների վերաբերյալ, այլև դարձավ հիշարժան և ներշնչող կրթական փորձառություն, որտեղ ուսուցումն ու ստեղծագործականությունը համադրվեցին հստակ և կիրառելի արդյունքի՝ դատավարության տեսահոլովակի տեսքով:

https://www.youtube.com/watch?v=MGYhh1F2KC8

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նախագծում սովորողների առավելագույն գնահատականը 10 միավոր է, որը բաշխված է հետևյալ չափանիշներում.

Ուսումնական նախագծում սովորողները գնահատվել են հետևյալ երեք չափանիշներով՝

1. Նախագծին մասնակցություն (4 միավոր)
2. Ներկայացման հմտություններ (2 միավոր)
3. Գիտելիքների ստուգում (4 միավոր):

Նախագծին մասնակցություն

1 միավոր	Մասնակցել է 1-2 հանդիպման և քննարկման: • Չի ներգրավվել աշխատանքներին և չի կատարել իր առջև դրված խնդիրները: • Չի համագործակցել թիմի անդամների հետ:
2 միավոր	• Մասնակցել է առնվազն 3 հանդիպումների և քննարկումների: • Չի ներգրավվել աշխատանքներին և դժվարացել է կատարել իր առջև դրված խնդիրները: • Անարդյունավետ է համագործացել է թիմի անդամների հետ:
3 միավոր	• Մասնակցել է 5-6 հանդիպումների և քննարկումների: • Ներգրավվել է աշխատանքներին և կատարել իր առջև դրված խնդիրները: • Արդյունավետ համագործակցել է թիմի բոլոր անդամների հետ:
4 միավոր	• Մասնակցել է բոլոր հանդիպումներին և քննարկումներին: • Լիարժեք ներգրավվել է աշխատանքներին և կատարել իր առջև դրված բոլոր խնդիրները: • Նախաձեռնել է արդյունավետ և նպատակային համագործակցություն թիմի բոլոր անդամների հետ:

Ներկայացման հմտություններ

0. 5 միավոր	• Սովորողի կողմից կատարված ուսումնասիրությունները չեն առնչվում հիմնախնդրին: Բացակայում է նյութի շարադրման տրամաբանական հաջորդականությունը: • Սովորողի կողմից նյութը ներկայացվում է առանց որոշակի մշակման և միաբնույթ է: • Սովորողի խոսքը կցկտուր է, ոչ լիարժեք և չի համապատասխանում բովանդակությանը:
1 միավոր	• Սովորողի կողմից կատարված ուսումնասիրությունները մասամբ են առնչվում հիմնախնդրին: Նյութի շարադրանքում առանձին հարցեր անհասկանալի են: • Սովորողի կողմից նյութը ներկայացվում է մշակված, սակայն միօրինակ:

	• Սովորողի խոսքը սահուն է, հիմնականում համապատասխանում է բովանդակությանը, սակայն բացակայում են հիմնավորումները:
1.5 միավոր	• Սովորողի կողմից կատարված ուսումնասիրություններն առնչվում են հիմնախնդրին: Նյութի շարադրանքը տրամաբանական է, բաղկացուցիչ մասերը փոխլրացնում են իրար: • Սովորողի կողմից ներկայացված նյութը բազմազան է, ներկայացված է ֆենոմենոլոգիական մոտեցմամբ: Առկա են հեղինակային գաղափարներ: • Սովորողի խոսքը սահուն է, համոզիչ և առկա են հիմնավորումներ, բառապաշարի բազմազանությունը և արդյունավետ կիրառումը համապատասխանում է թեմային:
2 միավոր	• Սովորողի կողմից կատարված ուսումնասիրությունները լիարժեք արտացոլում են հիմնարար հարցերը: Նախագծի բովանդակությունը հասկանալի է, տրամաբանորեն շարադրված, ընկալելի: • Սովորողի կողմից ներկայացված նյութը բազմազան է, աշխատանքը աչքի է ընկնում յուրօրինակ մոտեցմամբ, տարբերվում է ինքնատիպ և ստեղծարար գաղափարներով: • Սովորողի խոսքը սահուն է, համոզիչ, փաստարկված, պատկերավոր և հուզականորեն հագեցած: Բառապաշարի բազմազանությունը և արդյունավետ կիրառումը թեման դարձնում է առավել ներկայանալի և գրավում լսարանի ուշադրությունը:

Գիտելիքների ստուգում

Գիտելիքների ստուգումը կազմակերպվել է նախագծի նախավերջին շաբաթում թեստի միջոցով: Թեստը կազմված է եղել 10 հարց, որում ներառված են հարցեր մարդու իրավունքներից, թեմային առնչվող անգլերեն բառապաշարից, դատական համակարգի գործունեությունից: Գիտելիքների ստուգումը գնահատվել է առավելագույնը **4** միավոր:

Հ/Հ	Անուն, ազգանուն	Նախագծին մասնակցություն	Ներկայացման հմտություններ	Գիտելիքների ստուգում	Գնահա-տական

,,,,,,,,,	Անգելինա Մկրտչյան Մակիչի	1	2	3	6
	Ռազմիկ Մխիթարյան Արտակի	3	2	3	8
	Գոռ Հովհաննիսյան Գևորգի	2	1	2	5
	Գեղամ Հովհաննիսյան Գևորգի	2	1	2	5
	Ներսես Հակոբյան Զոհրաբի	3	2	2	7
	ԱՎԵՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ ՍԵՑՐԱՆԻ	2	1	2	5
	Տաթևիկ Գևորգյան Գարիկի	3	2	2	7
	ԱՆԻ ԲԱԲԱՅԱՆ ԳԱԳԻԿԻ	4	2	3	9
	Դավիթ Բաղալյան Ատոմի	4	2	2	8
	Ալեն Վարդանյան Արմենակի	2	2	2	6
	Նարեկ Անտոնյան Նորիկի	2	1	2	5
	Էլենա Պողոսյան Վյաչեսլավի	2	1	2	5

Test

Name: _____
Date: _____

---

1. What is a *court*?
a) a school
b) a room where people dance
c) a place where legal cases happen
d) a hospital

---

2. Ինչ է նշանակում ***right*** **:**
a) կանոն
b) իրավունք

c) աշխատանք
d) արգելք

3. Who is a *lawyer*?
a) someone who teaches at school
b) someone who sells things
c) someone who helps people in court
d) someone who drives a car

4. Լրացրու բաց թողնված բառը**.**
The _____ listens to everyone in court and makes a decision.
(դատավորը)

5. What does a *prosecutive lawyer* do?
a) Helps the judge
b) Helps the person who is accused
c) Tries to prove the person is guilty
d) Writes new laws

6. Ի՞նչ է նշանակում ***law*** **(**օրենք**):**
a) մի պատմություն
b) կանոն, որը բոլորը պետք է պահեն
c) տոն
d) խաղ

7. Write one example of a human *right*:

_____

_____

8. Ի՞նչ է նշանակում ***under court*** **:**
a) մարդ, ով դատավոր է
b) մարդ, ում գործը դեռ քննվում է
c) մարդ, ով ունի իրավունք
d) ոստիկան

9. Fill in the blank:
The lawyer and the persecutive lawyer speak in the _____.

10. Թարգմանիր անգլերեն.
«Նա իրավունք ունի կրթություն ստանալու»: